Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2024-2025 ուս. տարի
/տևողությունը – **120** րոպե/
9 – րդ դասարան

**1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ** 2միավոր

ա. Հետանտառային լանդշաֆտները հիմնականում տարածվում են անտառների տարածման գոտուց վեր:
բ. ՀՀ կենտրոնական գոտում անտառներն ավելի մեծ մակերես են զբաղեցնում, քան ՀՀ հարավում:
գ. ՀՀ տարածքի ամենախոշոր արհեստական անտառը Սևանի ավազանում է:
դ. ՀՀ հյուսիս-արևելքում անտառածածկ մակերեսն ավելի մեծ է, քան ՀՀ հարավում:
ե. Արևելյան սոսու միակ պուրակը ՀՀ հյուսիս-արևելքում է:
զ. ՀՀ անտառներում արգելվում է արդյունագործական հատումը:
է. Անտառները զբաղեցնում են ՀՀ տարածքի մոտ 20%-ը:
ը. Ուրծի և Վայքի լեռների հյուսիսահայաց լանջերին ամենաբնորոշ լանդշաֆտներն անտառներն են:

**2. Նշված երևույթներից ո՞րն է ուղեկցվում մառախլապատ եղանակներով** 1միավոր

ա. լեռնահովտային քամի բ. կարկուտ
գ. խորշակ դ. ջերմաստիճանային շրջադասություն

**3. Նկարագրով որոշել պետությունը** 1միավոր

Բնակչությամբ գերխոշոր այդ երկրում էթնիկ կազմը կտրուկ փոխվեց նվաճողների շնորհիվ, իսկ տեղաբնիկները ներկայումս բնակչության փոքր մասն են կազմում: Եկվորները նաև փոխեցին մայրաքաղաքը և նրան տվեցին թարգմանաբար «նվաճող կամ հաղթանակ» անվանումը: Ներկայիս մայրաքաղաքը երկրի բազմաթիվ պատմական մայրաքաղաքներից ամենաերկարն է պահպանում այդ կարգավիճակը: Մինչ այդ ամենաերկարակյաց մայրաքաղաքը ներկայումս էլ շարունակում է մնալ իր մայրցամաքի խոշորագույն նավահանգիստներից մեկը:

**4. Ելնելով գետի աջ ափից ձախ ափ յուրաքանչյուր 0.5մ մեկ կատարված հետևյալ չափումներից՝ կառուցեք գետի կենդանի կտրվածքի գծապատկերը (0.5միավոր) և պատասխանեք հարցերին**

| Ցուցանիշ | Հեռավորությունը աջ ափից (մ) | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | 0.5 | 1 | 1.5 | 2 | 2.5 | 3 | 3.5 | 4 | 4.5 | 5 |
| Խորություն (սմ) | 0 | 10 | 20 | 30 | 40 | 52 | 40 | 30 | 20 | 10 | 0 |
| Հոսքի միջին արագություն (մ/վրկ) | 0.5 | | | | | | | | | | |

**ա.** Որքա՞ն է գետի միջին խորությունը (ափերի 0 տվյալները չհաշվել) 0.5միավոր
**բ.** Որքա՞ն է գետի կենդանի կտրվածքի մակերեսը 0.5միավոր
**գ.** Որքա՞ն է գետի ծախսը 0.5միավոր
**դ.** Առավելագույնը քանի՞ հեկտար հողատարածք կարելի է ոռոգել տվյալ հատվածից ջրառ կատարելով, եթե ջրապահանջը 100 օր տևողությամբ ոռոգման սեզոնին 10 մ$^3$/հա է, իսկ գետի էկոլոգիական թողքը այդ ընթացքում պետք է կազմի գետի հոսքի 10%-ը: 1միավոր

**5. Օգտագործելով աղյուսակում բերված տվյալները՝**

**ա.** Որոշեք երկաթուղային ցանցի առավելագույն խտություն ունեցող մարզը՝ հիմնավորելով հաշվարկով (1միավոր)
**բ.** Նշեք երկաթուղային ցանցի նման անհավասար զարգացվածության երկու հավանական պատճառ՝ համառոտ բացատրությամբ (1միավոր)

| Մարզ | Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մարզի մակերես (հզ կմ$^2$) | 1.5 | 3 | 5 | 2 | 4 | 8 | 3 |
| Երկաթուղու երկարություն (կմ) | 500 | 150 | 800 | 400 | 200 | 0 | 1800 |

**6. Թվարկել** միջկղզային չորս ծով 1միավոր

**7. Դասավորել.**

**ա.** նշված լեռներն ըստ դրանց տարածքում վերընթաց գոտիների քանակի աճող հաջորդականության. Չիմբորասո, Էլբրուս, Դենալի (Մակ-Քինլի), Էվերեստ 1 միավոր

**բ.** նշված մարզերն ըստ բնակչության խտության աճող հաջորդականության. Կոտայք, Շիրակ, Վայոց ձոր, Լոռի 1 միավոր

**8. Բացատրել՝ հարցադրումներից յուրաքանչյուրի համար ներկայացնելով մեկ հիմնավոր պատճառ**

**ա.** Ինչու՞ է ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ որոշ բնակավայրերում օդի որակը բարելավվել: 1 միավոր

**բ.** Ինչու՞ են Հյուսիսային Աֆրիկայում երկրների միջև սահմանների մեծ մասը աշխարհագրական: 1 միավոր

**9. Դիտարկեք տեղագրական քարտեզը և պատասխանեք հարցերին**




**ա.** Լեռնագնացները, հետևելով ԱԲ առանցքին, ի՞նչ ազիմուտով և քանի՞ կմ պետք է շարժվեն որպեսզի Ա կետից հասնեն Բ կետ 1 միավոր

**բ.** Հետևելով ԲԳ առանցքին՝ ի՞նչ ազիմուտով և քանի՞ կմ պետք է շարժվեն որպեսզի Բ կետից հասնեն Գ կետ 1 միավոր

**10. Պատասխանեք ստորև բերված հարցադրումներին և հիմնավորեք**

**ա.** Ինչպիսի՞ն է թեթև սննդի արդյունաբերության տեղաբաշխումն աշխարհում և ինչու՞ 1 միավոր

**բ.** Ո՞ր մայրցամաքում են երկրաշարժերը ամենահաճախը տեղի ունենում և ինչու՞ 1 միավոր

**11. Սեռատարիքային բուրգերը համապատասխանեցնել քարտեզում նշված համարներին (օր.՝ Ա-4)** 2միավոր




Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան